

Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ

Ծնվել է 1951 թ., Երևան քաղաքում, որտեղ և ստացել է իր նախնական կրթությունը:

1970 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1973 թ.: Նույն տարին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մեկնել է Զագորսկի վանք՝ տեղի հոգևոր ակադեմիայում կատարելագործելու իր ուսումը: 1976 թ. հաջողությամբ ավարտել է ակադեմիայի ասպիրանտական բաժինը՝ իր ներկայացրած «Ելնիկ Կողբացու աստվածաբանական հայացքները» թեզի համար ստանալով Ռուս Պրավոսլավ Եկեղեցու աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Այդ նույն շրջանում, 1973 թվականին, ձեռնադրվելով աբեղա, պաշտոնավարել է Մոսկվայի հայոց եկեղեցում՝ որպես հոգևոր հովիվ:

1975 թվականին Մայր Աթոռում հաջողությամբ պաշտպանելով «Ռուս աստվածաբանական գրականությունը Հայ Առաքելական Եկեղեցու մասին» վերնագրով իր վարդապետական թեզը, ստացել է վարդապետական աստիճան:

1976—1978 թթ. վարել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի փոխտեսչի և ապա՝ «Էջմիածին» ամսագրի քարտուղարի պաշտոնները:

1978—1979 թթ. պաշտոնավարել է Ռոստովի մարզի Զալդր գյուղում՝ որպես տեղի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ:

1979—1981 ուսումնական տարեշրջաններում դասախոսական աշխատանքի է կոչվել Էջմիածնի հոգևոր ճեմարանում՝ դասավանդելով աստվածաբանական և եկեղեցագիտական առարկաներ:

1981 թ. վերջերին Վեհափառ Հայրապետի կողմից նշանակվել է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, պաշտոն, որը ձեռնհասորեն շարունակում է վարել մինչև օրս:

1983 թվականի հոկտեմբերի 23-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է եպիսկոպոս նույն թեմի վրա՝ ձեռամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: